

**SOUTH CAUCASUS
PERFORMANCE ON MCC INDICES**

**ԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ
ՀՄԿ ՃՈՒՑՄԱՆԻՇՆԵՐԸ**

ՀԱՄԱՌՈՑ ԱԿՆԱՐԿ

Փետրվար 2008

Այս համառոտ ակնարկը ներկայացնում է Կովկասյան երկրներում Հագարամյակի մարտահրավեր կորպորացիայի 17 ցուցանիշների կատարողականի վերլուծությունը, որոնք գետնից են 3 կատեգորիաների մեջ՝ արդար կառավարում, ներդրումներ մարդկային կապիտալում և տնտեսական ազատություն: Սրանք տնտեսության կայուն և բարենպաստ զարգացման հիմնական նախադրյալներն են:

Վերլուծությունը իրականացված է 2006-2008 թթ. կտրվածքով, ուսումնասիրվել են ցուցանիշների իրականացման ընթացքը և կատարողականը: Հարկ է նշել, որ Ադրբեջանը չունի ՀՄԿ կողմից դրամական օժանդակություն, մինչդեռ Հայաստանը և Վրաստանը պայմանագիր են կնքել և իրավասու են նման ֆինանսական օժանդակության:

Վերլուծության և համեմատության հիմքում ընկած են երկրների ցուցանիշները. յուրաքանչյուր թեկնածու երկիր ստանում է ցուցանիշների կատարման դինամիկան տարեկան կտրվածքով, որտեղ գնահատվում է երկրի կատարողականը 3 կատեգորիաներով՝ արդար կառավարում, ներդրումներ մարդկային կապիտալում և տնտեսական ազատություն:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Հագարամյակի մարտահրավեր կորպորացիան (ՀՄԿ) հիմնադրվել է ԱՄՆ Կառավարության կողմից 2004 թ-ին՝ աշխարհի բոլոր աղքատ երկրներին օժանդակելու նպատակով: ՀՄԿ-ի առաքելությունն է տնտեսական կայուն աճի ապահովման միջոցով նպաստել համընդհանուր աղքատության կրճատմանը: Ըստ Կորպորացիայի, արդյունավետ է համարվում այն օգնությունը, որի արդյունքում երկրում ամրապնդվում է արդար կառավարումը, ներդրումները մարդկային կապիտալում և տնտեսական ազատությունը:

Մինչ երկիրը իրավասու դառնա նման օժանդակությանը, ՀՄԿ ուսումնասիրում է 17 անկախ և թափանցիկ ցուցանիշներ (հարկ է նշել որ բնական ռեսուրսների կառավարման և հողի իրավունքի ու մատչելիության ցուցանիշներն ընդունվել են 2007թ.):

ՀՄԿ պատասխանատու է Հագարամյակի մարտահրավեր հիմնադրամը (ՀՄՀ)¹ վերահսկելու համար, որը ԱՄՆ-ի Կոնգրեսից յուրաքանչյուր տարի դրամական միջոցներ է ստանում: Այն վերահսկվում է Տնօրենների խորհրդի կողմից, որը կազմված է ԱՄՆ Կառավարության քարտուղարից, Գանձապետարանի քարտուղարից, ԱՄՆ-ի առևտրային ներկայացուցիչից, ԱՄՆ ՄԶԳ

Ցածր եկամուտ եւ ցածր միջին եկամուտ ունեցող երկրներ

Ցածր եկամուտ ունեցող երկիր (ՑԵԵ) է համարվում այն երկիրը, որի ՀԱԱ (Համախառն ազգային արդյունք) հավասար կամ փոքր է \$1,735: Ցածր միջին եկամուտ ունեցող երկիրը (ՑՄԵԵ) պետք է ունենա \$1,736 - \$3,595 ՀԱԱ: Երկրների նման տարբերակումը սահմանված է ֆեդերալ օրենքում, համաձայն որի ՀՄԿ կողմից իրականացված ծրագրի օգնության միայն 25%-ը կարող է հատկացվել Ցածր միջին եկամուտ ունեցող երկրի ծրագրի մեջ: Նման սահմանի իմաստն այն է, որ, համաձայն ՀՄԿ հիմնադրման օրենքի, դրամական օժանդակության մեծ մասը հատկացվելու է աշխարհի ամենաաղքատ երկրներին: Համապատասխանաբար

աղմինիստրացիայից, ՀՄԿ Գլխավոր գործադիր տնօրենից և 4 պատգամավորից՝ նշանակված ԱՄՆ Նախագահի կողմից և համաձայնեցված ԱՄՆ Սենատի կողմից:

Ստորև պատկերված աղյուսակը ներկայացնում է այն 17 ցուցանիշները, համաձայն որոնց երկրները ՀՄԿ օժանդակության իրավունք են

Կովկասյան երկրները ընկնում են հետևյալ կատեգորիաների մեջ. Հայաստանը (\$1,930) և Ադրբեջանը (\$1,850) դասվում են Ցածր միջին եկամուտ ունեցող երկրների շարքին, իսկ Վրաստանը (\$1,560) Ցածր եկամուտ ունեցող երկրների շարքին:

Աղյուսակ 1: 17 ճուղակիչներ

ՑՈՒՑԱՆԻՇ	ԿԱՏԵԳՈՐԻԱ	ԱՂԲՅՈՒՐ
Քաղաքացիական ազատություններ	Արդար կառավարում	Ֆրիդոմ Հաուզ ²
Քաղաքական իրավունքներ	Արդար կառավարում	Ֆրիդոմ Հաուզ
Հաշվետվողականություն	Արդար կառավարում	Համաշխարհային բանկի ինստիտուտ ³
Արդյունավետ կառավարում	Արդար կառավարում	Համաշխարհային բանկի ինստիտուտ
Օրենքի գերակայություն	Արդար կառավարում	Համաշխարհային բանկի ինստիտուտ
Կոռուպցիայի վերահսկելիություն	Արդար կառավարում	Համաշխարհային բանկի ինստիտուտ
Իմունիզացման տեմպը	Ներդրում մարդկային կապիտալում	Առողջապահության համաշխարհային Կազմակերպություն ⁴
Առողջապահության ոլորտի ծախսեր	Ներդրում մարդկային կապիտալում	Առողջապահության համաշխարհային Կազմակերպություն ⁵
Աղջիկների տարրական կրթություն ստանալու ծավալը	Ներդրում մարդկային կապիտալում	ՅՈՒՆԵՍԿՈՒ ⁶
Տարրական կրթության ծախսեր	Ներդրում մարդկային կապիտալում	ՅՈՒՆԵՍԿՈՒ/ԱՎԾ
Բնական ռեսուրսների կառավարում	Ներդրում մարդկային կապիտալում	CIESIN/Yale ⁷
Գործարարություն սկսելը	Տնտեսական ազատություն	ՄՖԿ ⁸
Գնաճ	Տնտեսական ազատություն	ԱՄՅ ՀՏԺ ⁹
Առևտրային քաղաքականություն	Տնտեսական ազատություն	Հերիթիջ ֆաունդեյշն ¹⁰
Կարգավորման որակ	Տնտեսական ազատություն	Համաշխարհային բանկի ինստիտուտ
Ֆիսկալ քաղաքականություն	Տնտեսական ազատություն	ԱՎԾ/ԱՄՖ ՀՏԺ
Հողի իրավունք և մատչելիություն	Տնտեսական ազատություն	IFAD ¹¹ /ՄՖԿ

Արդար կառավարում

Քաղաքացիական ազատություններ - փորձագերների խումբը գնահատում է մասնակից երկրների արտահայտվելու ազատությունը, հաղորդակցման և կազմակերպելու իրավունքները, օրենքի գերակայությունը և մարդու իրավունքները, անձի անկախությունը և տնտեսական իրավունքները,
 Քաղաքական իրավունքներ - ազատ և արդար ընտրություններ անցկացնելու գերակա-

յությունը, մրցակցային քաղաքական կուսակցություններ ստեղծելու հնարավորությունը քաղաքացիների կողմից՝ արդար ընտրություններին մասնակցելու համար, միջազգային իշխանությունների, տոտալիտար խմբերի, կրոնական հիերարխիաների և տնտեսական օլիգարխների գերակայությունից, և փոքրամասնությունների քաղաքական իրավունքները,
 Հաշվետվողականություն - հետազոտության արդյունքում ստացված այս ցուցիչը

զնահատում է երկրի ինստիտուտների հնարավորությունը քաղաքացիական ազատությունների պաշտպանության մեջ, քաղաքացիների մասնակցության աստիճանը կառավարության կազմելուն, ինչպես նաև անկախ լրատվամիջոցները,

Ք Արդյունավետ Կառավարում – հանրային ծառայությունների մատուցման որակը, քաղաքացիական ծառայողի իրավասությունը և քաղաքական ճնշումներից զերծ լինելը, ինչպես նաև Կառավարության կարողությունը առողջ քաղաքականության մշակման և իրականացման մեջ,

Ք Օրենքի գերակայությունը – հանրության վստահությունը և ենթարկվելը օրենքներին, բռնության հաճախակիությունը և ոչ բռնի հանցանքները, դատական համակարգի արդյունավետությունը և կանխատեսելիությունը, պայմանագրերի հարկադրական իրավակատարումը,

Ք Կոռուպցիայի վերահսկելիությունը – լրացուցիչ վճարումների հաճախականությունը «գործը առաջ տանելու համար», կոռուպցիայի ազդեցությունը գործարար միջավայրի վրա, «մեծ կոռուպցիա» քաղաքականության դաշտում, և վերնախավի ընդգրկվածության միտումը «զավթող» կոռուպցիայի մեջ:

Ներդրում մարդկային կապիտալում

Ք Առողջապահության ոլորտի ծախսերը – առողջապահության ընդհանուր ծախսերի հարաբերությունը Համախառն ներքին արդյունքին (ՀՆԱ),

Ք Իմունիզացման տեմպը - առկա թարմ տվյալներ ԴԿԻՊՅ-ի (դիֆթերիա, կապույտ հազ, և պրկախտ) և կարմրուկի իմունիզացիայի չափերի վերաբերյալ,

Ք Տարրական կրթության ծախսերը – տարրական կրթության ընդհանուր ծախսերի հարաբերությունը Համախառն ներքին արդյունքին (ՀՆԱ),

Ք Աղջիկների տարրական կրթություն ստանալու ծավալը – տարրական կրթություն ստացած աղջիկների թվի հարաբերությունը բնակչության համապատասխան տարիքային խմբի վրա,

Ք Բնական ռեսուրսների կառավարում - շրջանի էկոլոգիայի պաշտպանությանը վերաբերվող տվյալները, 2006թ. երեխաների մահացության տվյալները (1-4 տարեկան), 2004թ. ջրի մատչելիության տվյալները, և 2004թ. խանդիտարիայի տվյալների մատչելիությունը:

Տնտեսական ազատություն

Ք Գործարարություն սկսելը – հաշվարկվում է IFCI կողմից, որպես երկու ցուցանիշների միջին. գործ սկսելու համար անհրաժեշտ գումարը (Համաշխարհային բանկի խմբին կից Մասնավոր հատվածի խորհրդատվական ծառայությունը աշխատելով տեղական իրավաբանների և այլ մասնագետների հետ դիտարկում են որոշակի կանոններ, որոնք ազդում են գործարար միջավայրում ներդրումներ կատարելու վրա: Այսպես, իրականացված հետազոտությունների ընթացքում գործ սկսելու համար անհրաժեշտ գումարը հաշվարկվել է որպես մեկ շնչին ընկնող եկամուտը տոկոսային արտահայտությամբ և կազմակերպություն բացելու համար անհրաժեշտ օրերի քանակը (Համաշխարհային բանկի խմբին կից Մասնավոր հատվածի խորհրդատվական ծառայությունը աշխատելով տեղական իրավաբանների և այլ մասնագետների հետ, հաշվարկում է, թե քանի օր է անհրաժեշտ նոր կազմակերպություն բացելու համար),

Ք Գնաճ - վերջին 12 ամիսների ընթացքում սպառողական գներում տեղի ունեցած փոփոխությունները, որոնք արձանագրվել են Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից կամ այլ հասարակական ֆորումում՝ համապատասխան հեղինակություն վայրղ տեղական արժույթային կազմակերպության կողմից,

Ք Ֆիսկալ քաղաքականությունը - բյուջեի պակասուրդը հարաբերելով ՀՆԱ-ին՝ երեք տարվա միջինացումով: Տվյալները տրամադրվում են ստացող կառավարության կողմից, սակայն համեմատվում այլ աղբյուրների հետ և մատչելի է բոլորին,

Ք Առևտրային քաղաքականությունը – չափում է երկրի պատրաստակամությունը համաշխարհային առևտրին՝ հիմնվելով միջին սակագների չափի և առևտուր իրականացնելու համար, ոչ սակագնային խոչընդոտների

Ք Կարգավորման որակ – չափում է երկրների գործարար ոլորտում կարգավորման բեռը, գների վերահսկումը, Կառավարության դերը երկրի տնտեսության մեջ, միջազգային ներդրումների կարգավորում և այլ ոլորտները,

Ք Հողի իրավունք և մատչելիությունը – սեփականությունը գրանցելու համար ծախսված ժամանակը և գումարը:

Աղբբեջան, Հայաստան եւ Վրաստան

Աղբբեջան

Չնայած Աղբբեջանի եկամուտը մեկ շնչի հաշվով բարձր է Վրաստանի տվյալներից, սակայն ցուցանիշների կատարումը երեք տարիների կտրվածքով բավականին ցածր է: Այնուամենայնիվ, Աղբբեջանը դեռևս ՅՄԿ կողմից օժանդակություն ստացող երկրների շարքին չի պատկանում: Ստորև ներկայացված աղյուսակը ամփոփում է 2006թ., 2007թ., և 2008թ. ցուցանիշները, տոկոսային արտահայտությամբ:

Աղյուսակ 2. Աղբբեջան. Ցուցանիշները ըստ կատեգորիաների 2006 - 2008թթ.

ՑՈՒՑԱՆԻՇ	2006	2007	2008
ԱՐԴԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ			
Քաղաքական իրավունքներ	17-40%	31%	22%
Քաղաքացիական ազատություններ	22-47%	36%	19%
Կոռուպցիայի վերահսկելիություն	25%	36%	6%
Արդյունավետ կառավարում	49%	63%	19%
Օրենքի գերակայությունը	50%	50%	13%
Հաշվետվողականություն	45%	32%	16%
ՆԵՐԴՐՈՒՄ ՄԱՐԴԱՎՅԻՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ			
Իմունիզացման տեմպը	88%	87%	59%
Առողջապահության ոլորտի ծախսեր	29%	6%	0%
Տարրական կրթության ծախսեր	60%	8%	0%
Աղջիկների տարրական կրթություն ստանալու ծավալը	95%	85%	32%
Բնական ռեսուրսների կառավարում	-	73%	24%
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶՏՈՒԹՅՈՒՆ			
Կարգավորման որակ	55%	69%	31%
Հողի իրավունք և մատչելիությունը	-	95%	96%
Գործարարություն սկսելը	-	-	71%
Գործ սկսելու համար անհրաժեշտ գումարը	90%	94%	-
Կազմակերպություն բացելու համար անհրաժեշտ օրերի քանակը	10%	38%	-
Առևտրային քաղաքականությունը	53-72%	71%	65%
Գնաճ	21%	38%	17%
Ֆինսկալ քաղաքականությունը	89%	84%	90%

Այսպես աղյուսակի ձախ մասը ներկայացնում է 17 ցուցանիշներն ըստ կատեգորիաների, իսկ աջ մասը՝ դրանց կատարողականը տոկոսային արտահայտությամբ: Աղյուսակից պարզ երևում է գրեթե բոլոր ցուցանիշների անկման բացասական միտումը:

Հայաստան

Անկախ այն փաստից որ Հայաստանը դասվում է Ցածր միջին եկամուտ ունեցող երկրների շարքին, ունենալով \$1,930 եկամուտ մեկ շնչի հաշվով, այնու-

ամենայնիվ նախորդ տարիների համեմատությամբ 2008թ.-ի ծուցանիշների կատարողականը շատ ավելի ցածր է, մասնավորապես, արդար կառավարում կատեգորիայի կտրվածքով: Այսպես ստորև ներկայացված աղյուսակը ամփոփում է 2006թ., 2007թ., և 2008թ. ցուցանիշները տոկոսային արտահայտությամբ:

Աղյուսակ 3. Հայաստան. Ցուցանիշները ըստ կատեգորիաների 2006 - 2008թթ

ՑՈՒՑԱՆԻՇ	2006	2007	2008
ԱՐԴԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ			
Քաղաքական իրավունքներ	40-54%	41%	34%
Քաղաքացիական ազատություններ	47-68%	47%	28%
Կոռուպցիայի վերահսկելիություն	75%	69%	31%
Արդյունավետ կառավարում	83%	92%	59%
Օրենքի գերակայությունը	71%	79%	47%
Հաշվետվողականություն	51%	53%	28%
ՆԵՐԴՐՈՒՄ ՄԱՐԴԱՎՅԻՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ			
Իմունիզացման տեմպը	78%	79%	38%
Առողջապահության ոլորտի ծախսեր	39%	19%	3%
Տարրական կրթության ծախսեր	50%	66%	52%
Աղջիկների տարրական կրթություն ստանալու ծավալը	98%	98%	40%
Բնական ռեսուրսների կառավարում	-	87%	59%
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶՏՈՒԹՅՈՒՆ			
Կարգավորման որակ	95%	100%	91%
Հողի իրավունք և մատչելիություն	-	98%	100%
Գործարարություն սկսելը	-	-	84%
Գործ սկսելու համար անհրաժեշտ գումարը	100%	99%	-
Կազմակերպություն բացելու համար անհրաժեշտ օրերի քանակը	86%	85%	-
Առևտրային քաղաքականությունը	95-98%	100%	96%
Գնաճ	99%	99%	86%
Ֆինսկալ քաղաքականությունը	83%	63%	38%

Աղյուսակի ձախ մասում նշված են բոլոր 17 ցուցանիշներն ըստ կատեգորիաների իսկ աջ մասը ներկայացնում է դրանց կատարողականը՝ տոկոսային արտահայտությամբ: Ըստ տվյալների, արդար կառավարում, ներդրում մարդկային կապիտալում և տնտեսական ազատություն կատեգորիաների կատարումը զգալիորեն նվազել է նախորդ տարիների համեմատ:

Վրաստան

Վրաստանի ցուցանիշների կատարումը ներկայացվում է ստորև բերված աղյուսակում 2006-2008թթ. կտրվածքով:

Աղյուսակ 4. Վրաստան. Ցուցանիշները ըստ կատեգորիաների 2006 - 2008թթ.

ՑՈՒՑԱՆԻՇ	2006	2007	2008
ԱՐԴԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԿ			
Քաղաքական իրավունքներ	67-85%	63%	69%
Քաղաքացիական ազատություններ	47-68%	72%	74%
Կոռուպցիայի վերահսկելիություն	36%	78%	84%
Արդյունավետ կառավարում	53%	77%	93%
Օրենքի գերակայությունը	48%	53%	66%
Հաշվետվողականություն	70%	67%	78%
ՆԵՐԴՐՈՒԿ ՄԱՐԴԱՅԻՆ ԿՊԻՏԱԼՈՒԿ			
Իմունիզացման տեմպը	54%	71%	68%
Առողջապահության ոլորտի ծախսեր	95%	9%	38%
Տարրական կրթության ծախսեր	8%	0%	3%
Աղջիկների տարրական կրթություն ստանալու ծավալը	73%	70%	71%
Բնական ռեսուրսների կառավարում	-	83%	84%
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ			
Կարգավորման որակ	46%	65%	89%
Հողի իրավունք և մատչելիություն	-	100%	100%
Գործարարություն սկսելը	-	-	100%
Գործ սկսելու համար անհրաժեշտ գումարը	87%	92%	-
Կազմակերպություն բացելու համար անհրաժեշտ օրերի քանակը	94%	97%	-
Առևտրային քաղաքականությունը	53-72%	60%	69%
Գնաճ	34%	45%	30%
Ֆինսկալ քաղաքականությունը	80%	77%	73%

Աղյուսակի ծախս մասում նշված են բոլոր 17 ցուցանիշներն ըստ կատեգորիաների իսկ աջ մասը ներկայացնում է դրանց կատարողականը՝ տոկոսային արտահայտությամբ: Ի տարբերություն Հայաստանի և Ադրբեջանի, նախորդ տարիների համեմատ Վրաստանում նկատվում է ցուցանիշների կատարման դրական միտում, մասնավորապես, արդար կառավարում և ներդրում մարդկային կապիտալում կատեգորիաների կտրվածքով:

Փաստորեն, Վրաստանը գտնվելով Ցածր եկամուտ ունեցող երկրների շարքում, ըստ ցուցանիշների կատարողականի առաջատար է՝ Հայաստանի և Ադրբեջանի համեմատ 2006-08թթ. կտրվածքով


Ստորև ներկայացվում են Կովկասյան երկրների արդար կառավարում կատեգորիայի՝ օրենքի գերակայությունը, կոռուպցիայի վերահսկելիությունը և հաշվետվողականությունը ցուցանիշների, կատարողականի համեմատությունը:

Ստորև պատկերված գծանկարը իրենից ներկայացնում է կոռուպցիայի վե-

րահսկելիություն ցուցանիշի զարգացման միտումները կովկասյան երեք երկրներում: Ուսումնասիրելով 2006-08թթ.-ի տվյալները պատկերվածից պարզ է դառնում, թե յուրաքանչյուր երկիր կոռուպցիայի վե-րահսկման փորձում ինչպիսի արդյունքների է հասել:

Այսպես, ըստ գծապատկերի Հայաստանը և Ադրբեջանն ունեն այս ցուցանիշը վերահսկելու բացասական միտում, ի տարբերություն Վրաստանի: Ավելին, 2006թ.-ից սկսած կոռուպցիայի դեմ պայքարելու Հայաստանի փորձերը մատնվեցին անհաջողության: Ադրբեջանի այս փորձը նույնպես ձախողվեց, չնայած ի սկզբանե այն հաջողություն չուներ: Վրաստանի ջանքերն այս ուղղությամբ լավագույնն էին. ինչպես երևում է գծապատկերից, 2008թ.-ի տվյալների համաձայն այն տարածաշրջանում առաջատար է:

Գ ճ ա պ ա տ կ եր 1. Կոռուպցիայի վերահսկելիությունը Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում




Գծապատկերից պարզ նկատվում է կոռուպցիայի վերահսկման բացասական միտումները Հայաստանում և Ադրբեջանում՝ ի տարբերություն Վրաստանի, ինչը չափում է իշխանության կողմից սեփական օգուտ ստանալու ձգտումը: 2006թ.-ից Հայաստանի փորձը անհաջողության է մատնվում, օրինակ՝ 2007թ.-ին 2006թ.-ի համեմատ կատարողականը նվազել է 55%-ով, իսկ 2008-ի համեմատատ՝ նվազել է 59%-ով: Հետաքրքիր պատկեր է ձևավորում, եթե տեսնենք, որ 2007թ.-ին 2006-ի համեմատ կոռուպցիայի վերահսկողության կատարումը նվազել է 8%-ով, այն ինչ

2008թ.-ին 2007-ի համեմատ՝ 55%-ով: Փաստորեն, համաձայն թվերի, իրավիճակը վատթարանում է և այս առումով հարկ է կասկածի տակ դնել ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի իրականացման արդյունավետությունը: Ինչ վերաբերվում է Ադրբեջանին, ապա չնայած գոյություն ունեցող Հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի, ինչպես երևում է գծապատկորում՝ կոռուպցիայի վերահսկելու ունակությունը գնալով թուլանում է: Այսպես, 2008թ.-ին 2006-ի համեմատ ցուցանիշի կատարողականը նվազել է 76%-ով: Եվ միայն Վրաստանին է հաջողվում դրական միտում պահպանել՝ 2008թ.-ին 84% աճ է նկատվել 2006-ի համեմատ, ինչը վկայում է Հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի արդյունավետության մասին:

Հաջորդ ուսումնասիրվող ցուցանիշը՝ օրենքի գերակայությունը իրենից ներկայացնում է հանրության վստահությունը և ենթարկումը օրենքներին, բռնության հաճախակիությունը և ոչ բռնի հանցանքները, դատական համակարգի արդյունավետությունը և կանխատեսելիությունը և պայմանագրերի հարկադրական կատարումը: Գծապատկերը ստորև ներկայացնում է կատարողականը Ադրբեջանում, Հայաստանում, և Վրաստանում:


Գծապատկեր 2. Օրենքի գերակայությունը Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում 2006-08թթ.



Օրենքի գերակայություն ցուցանիշի կատարողականը տարածաշրջանում, մասնավորապես Ադրբեջանում և Հայաստանում, նույնպես ուրախալի չէ: Չնայած 2006թ.-ից Հայաստանը դրական քայլեր է ձեռնարկել ընդունելու օրենքի

գերակայությունը և բոլորի հավասար լինելը օրենքի առջև, սակայն էական փոփոխություններ դեռևս չկան: Ավելին, կատարողականը տոկոսային արտահայտությամբ, ինչպես երևում է գծապատկերից, նվազել է: Այս ցուցանիշի կտրվածքով Ադրբեջանը ի սկզբանե ծախողվել է: Չնայած այն փաստի, որ 2006թ.-ին այս ցուցանիշի իրականացումը Վրաստանի կողմից բավականին ցածր մակարդակի վրա էր, սակայն 2007-ից խնդիրը կարծես թե հաղթահարվել է: Եվ վերջին ցուցանիշը՝ հաշվետվողականությունը, նույնպես ներկայացնում է հետաքրքիր պատկեր:

Գծապատկեր 3. Հաշվետվողականությունը Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում 2006-08թթ..



Համաշխարհային բանկի ներկայացված տվյալների համաձայն Հայաստանը և Ադրբեջանը, հաշվետվողականություն ցուցանիշը Վրաստանի համեմատ ավելի վատ են իրականացրել, ինչն ակնհայտ պարզ է դառնում վերևը պատկերված գծանկարից: Հայաստանը և Վրաստանը, դասվելով տարբեր եկամուտ ունեցող երկրների շարքին, հաշվետվողականություն ցուցանիշի կատարողականի տեսանկյունից նույնպես տարբեր հաջողությունների են հասել՝ Վրաստանը շատ ավելի լավ դիրքերում է: Իհարկե Ցածր եկամուտ ունեցող և Ցածր միջին եկամուտ ունեցող երկրների պատասխանատվությունը և պարտավորությունները տարբեր են, սակայն զարգացման միտումները ցույց են տալիս, որ ի տարբերություն Վրաստանի, Հայաստանը և Ադրբեջանը կատարման բացասական միտում ունեն:

Նախընտրելի ե՞ն, թե՞

ՀՄԿ ցուցանիշների Կովկասյան երկրների կատարողականը համեմատելիս ակնհայտ է դառնում այն փաստը, որ Հայաստանը և Ադրբեջանը, լինելով տարբեր կարգավիճակում, ունեն մեկ կարևոր ընդհանրություն՝ վատ իրագործում: Հարց է առաջանում, թե ինչքա՞ն է շարունակվելու և արդյո՞ք շարունակվելու է ՀՄԿ դրամական օժանդակությունը, և արդյո՞ք ՀՄԿ պարտավոր է շարունակել օժանդակությունը մի երկրի, որը բավարարաստիճանի չի իրականացնում իր առջև դրված պարտավորությունները:

Ակնհայտ է, որ Հայաստանում սպասվող նախագահական ընտրությունները անխուսափելիորեն կվատթարացնեն երկրում արդար կառավարում կատեգորիայի կատարողականը: Այդ առումով ՀՄԿ կկանգնի ծանր խնդրի առջև, քանզի ՀՄԿ-ի ընթացակարգում նշված է, թե Կորպորացիան ինչպես պետք է առձագանքի՝ շարունակական բնույթ կրող երկրի ցուցանիշների կատարողականի վատթարացման վերաբերյալ ՀՄԿ ծրագրի իրականացման ընթացքում: Ադրբեջանի դեպքում անգամ այս պահից կարելի է ենթադրել, որ առաջիկա նախագահական ընտրությունները կվատթարացնեն ցուցանիշների կատարումը: Անկասկած, Ադրբեջանը ի վիճակի է կազմակերպել ազատ և արդար ընտրություններ՝ համաձայն ժողովրդավարության սկզբունքների: Եվ,

այս դեպքում մեծ է հավանականությունը, որ «Կոմպակտ» կստորագրվի ՀՄԿ-ի հետ: Ադրբեջանը կարժանանա ՀՄԿ դրամական օժանդակությամբ: Այնուամենայնիվ, նման կանխատեսումը իրատեսական չէ: Ավելին,

վատ կատարողականը և բացասական միտումը գրեթե հույս չեն թողնում հաջողության հասնելու համար:

Վրաստանի դեպքում կարևորագույն գործոններից է առաջիկա նախագահական ընտրությունները: Քանզի վերջին ժամանակահատվածում տեղ գտած քաղաքական լարվածությունը, ոստիկանության դաժան գործողությունները խաղաղ ընդհանրության հավաքների նկատմամբ լուրջ վնասներ են հասցրել երկրի իմիջին: Այնուամենայնիվ, Վրաստանը մնում է տարածաշրջանի միակ երկիրը, որի ցուցանիշների կատարողականը և արդար կառավարման կատեգորիայի վառ դրսևորումը առաջատար են, չնայած, առաջիկա նախագահական ընտրությունները կարևոր դեր են խաղում և անցկացվելուն ընտրությունները միջազգային ստանդարտներին չհամապատասխանելու դեպքում ցուցանիշների կատարողականը զգալիորեն կարող է փոխվել:

Հայաստանում ՀՄԿ կբախվի լուրջ խնդրի հետ, քանզի պարզ չէ, թե ինչպես և կարձագանքի ծրագրի իրականացման ընթացքում երկրի անընդմեջ վաղ ցուցանիշներին

Ադրբեջանի իրողությունը նրանում է, որ եթե կարողանան կազմակերպել ազապ եւ արդար ընտրություններ, ապա մեծ է հավանակա-նությունը, որ կընդգրկվեն ծրագրի մեջ

Մոցիական քաղաքականության և զարգացման կենտրոն

Մոցիական քաղաքականության և զարգացման կենտրոնը հիմնադրվել է 2004 թվականին: Կենտրոնը նպաստում է այնպիսի մոցիական քաղաքականությանը, որը ստեղծում է նոր և բարելավված միջոցներ կարիքների բավարարման, խնդիրների լուծման համար, կառուցում է համայնքներ, որոնք հատուկ ուշադրություն են դարձնում երեք հիմնական խնդիրներին՝ աղքատության հաղթահարմանը, կոռուպցիայի դեմ պայքարին և սոցիալական ինտեգրմանը, ինչպես նաև աջակցում է այնպիսի համայնքների ստեղծմանը, որոնք նպաստում են անվտանգությանը, արդարությանը, ազատությանը և ներդաշնակ հասարակությանը և առաջարկում առավել հնարավորություններ կյանքի ավելի բարձր ստանդարտներ բոլորի համար:

Նշումներ

¹ Լրացուցիչ տեղեկության համար այցելեք հետևյալ կայքերը. www.cspda.org և www.mcc.gov

² Այցելեք www.freedomhouse.org

³ Այցելեք www.govindicators.org

⁴ Այցելեք

www.who.int/immunization_monitoring/data/

⁵ Այցելեք www.who.int/nha/en/

⁶ Այցելեք www.uis.unesco.org

⁷ Այցելեք

www.sedac.ciesin.columbia.edu/es/mcc.html

⁸ Այցելեք www.doingbusiness.org

⁹ Այցելեք

www.imf.org/external/pubs/ft/weo/2006/02/data/index.aspx

¹⁰ Այցելեք

www.heritage.org/research/features/index/

¹¹ Այցելեք www.ifad.org

Այլ աղբյուրներ.

- ♦ Հայաստանի ցուցանիշները, www.mcc.gov
- ♦ Ադրբեջանի ցուցանիշները, www.mcc.gov
- ♦ Վրաստանի ցուցանիշները, www.mcc.gov
- ♦ Երկրների ցուցանիշները 2007, ՀՄԿ, 2008